Բանալի խոսք.

(Եսայի 40:1,3,31)

1 «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք իմ ժողովրդին, - ասում է Աստուած, -

2 դուք՝ քահանաներդ, Երուսաղէմի սրտո՛վ խօսեցէք և մխիթարեցէ՛ք նրան, որովհետև նա լի է տառապանքով»:

3 Անապատում կանչողի ձայնն է. «Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճանապարհը և հարթեցէ՛ք մեր Աստծու շաւիղները:

31 իսկ նրանք, որոնք Տիրոջն են ապաւինում, նոր ուժ պիտի ստանան և նոր փետուրներով զարդարուեն ինչպէս արծիւներ, պիտի վազեն, բայց չպիտի յոգնեն, պիտի գնան, բայց քաղց չպիտի զգան:

1. ԱՅՍ ՏԱՐԻ ԱՄԵՆ ՕՐ ԻՐԱՐ ՄԽԻԹԱՐԵՑԷՔ:

Եբր. 3:13 - Իրար հորդորեցէք ամեն մէկ օր.

1 Թես. 5:11,14 - Սորա համար իրար մխիթարեցէք, և իրար շինութիւն տուէք՝ ինչպէս անում էլ էք:

14 մխիթարեցէք փոքրասիրտերին...

2. ԱՅՍ ՏԱՐԻ ԱՄԵՆ ՕՐ ԵԿԵՔ ՏԻՐՋԸ ԱՊԱՎԻՆԵՆՔ - ՍՊԱՍԵՆՔ:

Աստվածաշնչյան որոշ ՕՐԻՆԱԿՆԵՐ Տիրոջը սպասելու մասին

- ***Աբրահամը և Սարան -*** (Իսահակի համար)
- ***Նոյը -*** Ծնն. 7:24 - Եւ ջրերը երկրի 150 օր բարձրացած մնացին, 40 հետոյ տապանի պատուհանը բացա:
- ***Հիսուսը -*** Կատարեց իր միսիան:
- ***Մարիամը և Մարթան -*** Երբ Ղազարոսը մահացավ:
- ***Աշակերտները -*** սպասեցին Սուրբ Հոգու խոստմանը:
- ***Բոլոր հավատացիալները -*** սպասում են իր երկրորդ գալուստին:

Երբ սպասում եք.

- ***Սպասիր Տիրոջ խոստումներին -*** *Սաղ. 105:5 Ես կսպասեմ, վստահելով Նրա օգնությանը, որովհետև Նա խոստացել է:*
- ***Սպասիր Լռությամբ -*** *Սաղ. 62:5 - Ով իմ անձ, միայն լուռ սպասիր Աստուծուն. որովհետեւ նորանից է իմ հոյսը:*
- ***Սպասիր Համբերությամբ -*** *Սաղ. 37:7 - Համբերիր Տիրոջը եւ սպասիր նորան. մի բարկանա այն մարդի ճանապարհ հաջողուելիս՝ որ իր չար խորհուրդները կատարում է:*

3. ԱՅՍ ՏԱՐԻ ԱՄԵՆ ՕՐ ԵԿԵՔ ՆՈՐՈԳՎԱԾ ՄՏՔՈՎ ԵՎ ՆՈՐ ՈՒԺԵՐՈՎ ՍԿՍԵՆՔ ՄԵՐ ՕՐԸ:

- καινός new = Նոր բառը 61 անգամ նշված է Նոր կտակարանում և 132 անգամ Հին կտակարանում:

  Նոր գինին - նոր տկեր,

  Նոր ՈՒխտ - Նոր Կտակարան,

  Նոր կտավ - Հագեք Քրիստոսը

  Նոր պատվիրան - սիրեցեք իրար

  Նոր միտք - Քրիստոսի միտքը

  Նոր ստեղծուած - Քրիստոսում

  Նոր երկինք, Նոր երկիր, Նոր Երուսաղեմ

  Նոր երգ - Հայտնութիւն

  Մատ. 9:17 - Եւ նոր գինին էլ հին տկերի մէջ չեն ածիլ. ապա թէ ոչ՝ տկերը կպատառուին՝ և գինին կթափուի, և տկերը կկորչին. այլ նոր գինին նոր տկերի մէջ կածեն, և երկուսն էլ կպահուին:

  Հռ. 12:2 - Եւ մի կերպարանուիք այս աշխարհքի կերպարանքովը. այլ նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը, որ դուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին և կատարեալը:

  2 Կոր. 5:17 - Ուրեմն եթէ մէկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծուած է. հիները անցան, ահա ամեն բան նոր եղաւ: